

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԱՇԶԲ-24/34-3

ք. Երևան

02 « 04 » 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՑԵՆՏՌԱ ԿՈՒ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ե. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի վարչական շրջաններում կոյուղագծերի և հեղեղատար համակարգի կառուցման, վերակառուցման** աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքի ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:



3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ րացնելով միայն այն



այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամեկտ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 42 120 000 (քառասուներկու միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:



Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

$VQ = UQ / LQ \times YQ$, որտեղ՝

- 1) UQ -ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է.
- 2) LQ -ն հրավերով հրապարակված շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.
- 3) YQ -ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է՝ գումարային արտահայտությամբ.
- 4) VQ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է.

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները^{31.1}.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ



8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուի պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկացրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բախակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:



8.13 Սույն պայմանագիրը կազմված է 1.8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012000585
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան

(ստորագրություն)



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«<<ՑԵՆՏՌԱ ԿՈՒԼ>> ՍՊԸ
Ք. Երևան Էստոնական թ 25 62-63
Կոնվերս բանկ ՓԲԸ
ՀՀ 19300627416400
ՀՎՀՀ 01299858

Ե. Գրիգորյան

(ստորագրություն)



Կ.Տ.

Հավելված թիվ 1
«02» «09» 2024 թ. կնքված
ԵԲ-ԳՀԱՇՁԲ-24/34-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ՓՆՄՄՆ ՓԱՄԱՆԱՎԱՅՈՒՅՑ

Երևան քաղաքի վարչական շրջաններում կոյուղագծերի և հեղեղատար համակարգի կառուցման, վերակառուցման աշխատանքներ

Հ/Հ	Փնտրման պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (СРV)	Երեւոնի վարչական շրջանում հեղեղատար համակարգի կառուցման աշխատանքներ	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	Ընդհանուր գինը	Ընդ հան ուր քա նակ Ը	Կատարման	
							հասցեն	Ժամկետը
4	45231143/8		Տեխնիկական առաջադրանք 1. Իրականացնել աշխատանքներն ըստ շինարարական նորմերի և կանոնների: 2. Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին: 3. Ասիմետրիկ կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ: 4. Շինարարական աշխատանքների ընթացքում ապահովել շինարարականության պատշաճ կազմակերպումը՝ կիրառելով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված շին.հրապարակների ժամանակավոր պատենշով առանձնացման և տեղեկատվական փոխանակման կետերի տեղադրման կետերը: 5. Շինարարական աշխատանքների ընթացքում ըստ անհրաժեշտության պետք է ապահովել ներդրել 14 կետերի պահանջները ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտեին, այնուհետև ՀՀ Վերոխա Ջուր>> ՓԲԸ-ին կողմից տրամադրված նախագծման տեխնիկական պայմանի /եղակետային կետերի/ պատճեն: 6) Միացման նախահաշվի պատճեն: 7) Միացման վճարի անորոշագիր: 8) Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված տեխնիկական վերահսկման ակտ: 9) Վերահսկողություն իրականացրած կազմակերպության լիցենզիայի ներդրողի /շինարարության որակի տեխնիկական հսկողություն/՝ հիդրոտեխնիկական/ պատճեն: 10) Ծածկված /միջանցիկ/ աշխատանքների ընդունման ակտ/երդ: 11) Մոնիթորինգ խողովակի սերտիֆիկատ: 12) Մետաղական խողովակների դեպքում՝ եռակցման կայանների եզրակացություն: 13) Հիդրավիկ փորձական ակտ: 14) Կատարողական Ակտ Ձև-2: 15) Ակտով շինարարական օբյեկտը ընդունող հանձնաժողովի ակտ: 16) Շինարարական աշխատանքներն իրականացրած կազմակերպության հետ	դրամ	35640000	1	Էրեւոնի վարչական շրջանի Նոր Արեշի 34-րդ փողոց	Աշխատանքն երի կատարման ժամկետը՝ տեխնիկական և հսկողության պայմանագիր ը ուժի մեջ մտնելու օրվանից 85-րդ օրացուցային օրը ներառյալ



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

4-րդ չափաբաժին
Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 34-րդ փողոց

NN	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Միավոր	Միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդհանուր արժեք / հազար դրամ /
	1.1 Հիմնական հեղեղատարի հողային և տեխնոլոգիական աշխատանքներ				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	մ	550.00	0.43	235.40
2	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատորով, բարձում ա/մ տեղափոխելով 13կմ	մ ³	107.10	6.42	687.47
3	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	91.70	5.80	531.86
4	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	10.00	9.04	90.42
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	168.30	5.91	994.65
6	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	18.60	11.00	204.51
7	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	148.50	6.98	1036.53
8	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	16.4	27.65	453.44
9	Խրամուղու մշակում VI կարգի գրունտներում էքսկավատորով, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	356.4	7.18	2558.24
10	Խրամուղու մշակում հարվածահար մուրճով, ձեռքով, VI կարգի գրունտներում, բարձում ա/մ տեղափոխելով 13կմ	մ ³	39.60	33.75	1336.62
11	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	մ ³	21.2	5.59	118.44
12	Խրամուղու ետլիցք ավազով՝ տոփանումով	մ ³	814.0	5.85	4761.90
13	Խճի նախաշերտ h=15սմ	մ ²	771.0	1.68	1294.51
14	Բիտումի տարածում 1000քմ-4,12տ բիտումի ծախսով	տ	3.200	207.13	662.83
15	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ ²	771.0	5.20	4009.20
16	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ ²	771.0	3.93	3027.72
17	Պոլիէթիլեն de200, SN8 տիպի ծալքավոր խողովակների մոնտաժում խրամուղիներում փորձարկումով	մ	92.0	7.70	708.40
18	Պոլիէթիլեն de250, SN8 տիպի ծալքավոր խողովակների մոնտաժում խրամուղիներում փորձարկումով	մ	62.0	11.89	737.18



19	Պոլիէթիլեն de300, SN8 տիպի ծալքավոր խողովակների մոնտաժում խրամուղիներում փորձարկումով	մ	121.0	13.56	1640.52
20	Մ400մ տրամագծի օգտագործված պողպատե պատյան խողովակ	մ	12.0	28.15	337.74
Ընդամենը 1,1					25427.58
1.2. Դիտահորերի հողային և շինարարական աշխատանքներ (10 հորի համար)					
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	մ	100.00	0.43	42.80
2	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատորով, բարձում ա/մ տեղափոխելով 13կմ	մ ³	12.50	6.42	80.24
3	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	11.00	5.80	63.80
4	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	1.50	9.04	13.56
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	20.00	5.91	118.20
6	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	2.00	11.00	21.99
7	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով V կարգի գրունտներում բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	20.00	6.98	139.62
8	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	2.0	27.65	55.30
9	Խրամուղու մշակում VI կարգի գրունտներում էքսկավատորով, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	65.0	7.18	466.57
10	Խրամուղու մշակում հարվածահար մուրճով, ձեռքով, VI կարգի գրունտներում, բարձում ա/մ տեղափոխելով 13կմ	մ ³	6.00	33.75	202.52
11	B7.5 դասի բետոնի նախապատրաստական շերտ h=10սմ	մ ³	3.70	34.84	128.89
12	Ցեմենտ/ավազային շաղախ M100 մակնիշի	մ ³	0.35	43.55	15.24
13	Բետոնե վաքերի պատրաստում B12.5 դասի բետոնով, երկաթայնացումով	մ ³	9.60	74.20	712.29
14	D=1.0-1.5մ տրամագծով ե/բ հավաքովի կլոր հորի մոնտաժում	մ ³	12.0	42.37	508.38
15	D=1.5մ տրամագծով ե/բ հորերի հատակի սալերի տեղադրում ՀՍ-15 տիպի	հատ	2	62.33	124.66
16	D=1.0մ տրամագծով ե/բ հորերի հատակի սալերի տեղադրում ՀՍ-10 տիպի	հատ	8	32.27	258.13
17	Պատի օղակ ՊՕ 15-9 տիպի	հատ	6	50.04	300.25
18	Պատի օղակ ՊՕ 10-9 տիպի	հատ	19	32.63	620.03
19	Պատի օղակ ՊՕ 15-6 տիպի	հատ	2	27.19	54.38
20	Պատի օղակ ՊՕ 10-6 տիպի	հատ	1	19.58	19.58
21	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում թուշե ծանր մտոցով ԾՍ 1-15 տիպի	հատ	2	154.00	307.99
22	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում թուշե ծանր մտոցով ԾՍ 1-10 տիպի	հատ	8	117.33	938.65
23	Ներդիր տարրեր	կգ	246.4	0.66	162.62
24	Մետաղական ելարան	տն	0.226	887.85	200.65
25	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում	մ ²	7.0	0.85	5.92
26	Փոսորակի ետլիցք ավազով՝ տոփանումով	մ ³	82.0	5.85	479.70



Handwritten signature in blue ink.

27	Խճի նախաշերտ h=15սմ	մ ²	65.0	1.68	109.14
28	Բիտումի տարածում 1000քմ-4,12տ բիտումի ծախսով	տ	0.270	207.13	55.93
29	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ ²	65.0	5.20	338.00
30	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ ²	65.0	3.93	255.26
Ընդամենը 1,2					6800.29
2.1 Անճրատար խողովակների հողային և տեխնոլոգիական աշխատանքներ					
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	մ	258.00	0.43	110.42
2	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատորով, բարձում ա/մ տեղափոխելով 13կմ	մ ³	31.00	6.42	198.99
3	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	25.60	5.80	148.48
4	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	2.80	9.04	25.31
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	44.20	5.91	261.22
6	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	4.90	11.00	53.88
7	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով V կարգի գրունտներում բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	27.00	6.98	188.46
8	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	3.0	27.65	82.95
9	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	մ ³	9.4	5.59	52.52
10	Խրամուղու ետիցք ավազով՝ տոփանումով	մ ³	94.0	5.85	549.90
11	Խճի նախաշերտ h=15սմ	մ ²	162.0	1.68	272.00
12	Բիտումի տարածում 1000քմ-4,12տ բիտումի ծախսով	տ	0.670	207.13	138.78
13	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ ²	162.0	5.20	842.40
14	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ ²	162.0	3.93	636.17
15	Պոլիէթիլեն de200, SN8 տիպի ծալքավոր խողովակների մոնտաժում խրամուղիներում փորձարկումով	մ	117.0	7.70	900.90
16	Պոլիէթիլեն de250, SN8 տիպի ծալքավոր խողովակների մոնտաժում խրամուղիներում փորձարկումով	մ	12.0	11.89	142.68
Ընդամենը 2,1					4605.06
2.3. Անճրևընդունիչների հողային և շինարարական աշխատանքներ (14 ընդունիչի համար)					
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով դիտահորերի հատվածներում	մ	75.00	0.43	32.10
2	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատորով, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	5.10	6.42	32.74
3	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	4.70	5.80	27.26



Handwritten signature in blue ink.

4	Խրամուղու և փոստրակի մշակում ձեռքով III կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	0.50	9.04	4.52
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13 կմ	մ ³	9.20	5.91	54.37
6	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13 կմ	մ ³	1.00	11.00	11.00
7	Խրամուղու և փոստրակի մշակում էքսկավատորով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	4.20	6.98	29.32
8	Խրամուղու և փոստրակի մշակում ձեռքով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	0.50	27.65	13.82
9	Նախապատրաստական շերտ B12,5 (M150) դասի բետոնից	մ ³	4.50	37.58	169.11
10	Պատերի և հատակի իրականացում B20 դասի բետոնից	մ ³	15.00	77.22	1158.30
11	Ամրան A-III դասի	կգ	300.0	0.42	124.50
12	Մ300 մ տրամագծի օգտագործված պողպատե պատյան խողովակ	մ	2.1	22.96	48.22
13	Թուջե անցքավոր մտոց	հատ	30	32.27	967.98
14	Պատյան խողովակների երկշերտ յուղաներկում	մ ²	11.1	0.89	9.88
15	Փոստրակի ետլիցք ավազով՝ տոփանումով	մ ³	4.4	5.85	25.74
16	Խճի նախաշերտ h=15սմ	մ ²	48.0	1.68	80.59
17	Բիտումի տարածում 1000քմ-4, 12տ բիտումի ծախսով	տ	0.200	207.13	41.43
18	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ ²	48.0	5.20	249.60
19	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ ²	48.0	3.93	188.50
20	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում	մ	18.0	1.10	19.80
21	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում	մ	18.0	12.27	220.86
Ընդամենը 2,3՝					3509.63
Ընդամենը /հազ. դր./					40342.56
ԱԱՀ 20%					8068.51
